ներքին խոսքի տարերքին: Այդ առումով Դավրիժեցու պատմագրքում մենախոսություններով հատկանշվում են հատկապես ողբի ժանրային իրացումները: Բացի դրանից՝ մենախոսական պատումով են հատկանշվում վարքերում ու վկայաբանություններում հերոսների ապաշխարհական, աղոթքային սուզումները, թեպետ դրանք ևս խորքում երկխոսական բնույթ ունեն, քանզի դրանց խոսքային կառուցումը դիմումնային է և ծառայում է իբրև Աստծո հետ առնչվելու կերպ: Ահա «Վասն հակառակութեան Սահակ կաթուղիկոսին, զոր արար ընդ սուրբ Էջմիածնի և ընդ Մովսէս կաթուղիկոսին» վերնագրով Ի գլխում վկայագրված Սահակ կաթողիկոսի աղոթք-մենախոսությունը, որի բովանդակային-կառուցաբանական հատկանիշները ընդհանրական-կաղապարային բնույթ ունեն գոնե Դավրիժեցու պատմագրքի հատույթում. «Ո՛վ Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, դատապարտեալ ծառայ քո եմ և մեղուցեալ հոգւով և մարմնով, եթէ կամք քո հաճի կեալ ինձ կենդանի, փութով փրկեա զիս ի ցաւոյս՝ և տո՛ւր ինձ առողջութիւն. և եթէ կամք քո հաճի մեռանել ինձ, փութով տուր ինձ զմահ, զի հանգեայց ի տառապանաց ցաւոյս» (էջ 214):

Ընթերցողի հետ զրույցը աշխատության կառուցվածքում յուրօրինակ ընդմիջումի գործառույթ ունի: Պատմիչը կարծես հընթացս փորձում է ճշտել սեփական խոսքի ու վկայագրած իրադարձությունների թողած տպավորությունը, խոստումներ է տալիս, հետագայում՝ փաստարկում խոստումների իրականացումը և այլն: Մեծ հաշվով՝ զրույցը հավանական ընթերցողի հետ, զրույց է ինքն իր հետ: «Նրանք (պատմագիրները–Ա.Ն.) հաճախ ընթերցողին են ներկայանում իրենց մեծ ու փոքր հոգսերով, հույզերով, ապրումներով, գնահատումներով ու վերաբերմունքով, խոստումներով, երբեմն նաև աշխատանոցային մանրամասներով, – գրում է Աշոտ Սարգսյանը: – Նման հաղորդումների հիշատակարանային անմիջականությունը ենթադրում է նաև հիշատակարանի ժանրին հա-